Տեղեկատվական անվտանգության քաղաքականության հայտարարագիր

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ քաղաքականությունն է ապահովել և՛ բանկի և՛ հաճախորդի մասին տվյալների պահպանման ապահով միջավայր՝ անկախ այն բանից այդ տվյալները մասնավոր, թե կորպորատիվ հաճախորդների են, կամ թե Բանկի ներքին օգտագործման համար են: Բանկը միշտ առավելագույնս է հետևում գաղտնիության, ամբողջականության և հասանելիության գործառնական պահանջներին և շարունակելու է գործել անվտանգության տեսանկյունից մեր հաճախորդների շահերը լավագույնս պաշտպանելու ուղղությամբ:

Տեղեկատվական անվտանգության նպատակները

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ում սահմանված են տեղեկատվական անվտանգության հետևյալ նպատակները.

- Պահպանել Բանկի տեղեկատվության և տեղեկատվական ակտիվների գաղտնիությունը, ամբողջականությունը և հասանելիությունը և պաշտպանել բոլոր տեսակի ներքին և արտաքին, միտումնավոր և պատահական վտանգներից:
- Աշխատակիցների, մատակարարների և այլ լիազորված օգտագործողների համար ստեղծել ապահով և անվտանգ աշխատանքային միջավայր:
- Ապահովել, որ աշխատակիցները հստակ գիտակցեն իրենց տրամադրության տակ գտնվող տեղեկատվության գաղտնիության, ամբողջականության և հասանելիության պահպանման իրենց պատասխանատվությունը:
- Ապահովել տեղեկատվական անվտանգության համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:
- Պահպանել բաժնետիրոջ վստահությունը:
- Պահպանել Բանկի գործարար համբավը՝ նվազեցնելով հնարավոր միջադեպերից առաջացած վնասի չափը:
- Ապահովել, որ երրորդ անձանց կողմից հայտնած տեղեկատվությունը պաշտպանված լինի չթույլատրված օգտագործումից և կառավարվի տեղեկատվական անվտանգության քաղաքականության համաձայն:

Տեղեկատվական անվտանգության նպատակները իրականացնելու, ինչպես նաև հսկողության համապատասխան մակարդակ ապահովելու համար, Բանկը ստեղծելու, ներդնելու և պահպանելու է արդյունավետ և նպատակային տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ (ՏԱԿՀ)՝ հիմք ընդունելով ISO/IEC 27001:2013 ստանդարտի պահանջները:
Համոզվելու համար, որ տեղեկատվական անվտանգության նպատակները իրագործվում են, ինչպես նաև տեղեկատվական անվտանգության խնդիրները նույնականացվում են աուդիտի ծրագրի և կառավարման գործընթացների միջոցով, «ԱյԴի Բանկ» ՓԲԸ ղեկավարությունը հանձն է առնում ապահովել տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի (ՏԱԿՀ) կանոնավոր և համակարգված վերանայումը և շարունակական բարելավումը:

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
Վարչության նախագահ Միեր Աբրահամյան